**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

---

ԹԻՎ 15/22
«02» .03. 2015Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն՝ մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2015թվականի փետրվար ամսվա ընդունված որոշումները կարգադրություն չի արձակվել:

Առդիր «2» թերթից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ու Մ

«25» փետրվարի 2014 թվականի N 05-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 27 ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ՏՈՒՆ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝Ռուբեն Կարապետյանի գ.Արմավիր 27 փողոց 1-ին նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող գույքի նկատմամբ, իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումը.

Հաշվի առնելով,որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ. և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

### Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1 Վերականգնել քաղաքացիներ Ռուբեն Բաբկենի Կարապետյանի /ծնված 16.06.1961թ./, Անահիտ Ալեքսանի Կարապետյանի /ծնված 06.08.1962թ./ Հակոբ Ռուբենի Կարապետյանի /ծնված 22.07.1988թ/ , էդիտա Ռուբենի Կարապետյանի /ծնված 19.07.1989թ/ գույքային իրավունքները՝ճանաչելով նրանց սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 27 փողոց 1-նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող 1852 քմ օրինական հողամասի վրա գտնվող 1958թ-ին և 1998թ-ին կառուցված 69.8 ք/մբնակելի տան,1958թ-ին կառուցված 13.9ք/մ նկուղի,1970թվ-ին կառուցված 19.5ք/մ անասնաշենքի, 1998թվ-ին կառուցված 7.3ք/մ սան.հանգույցի 30.9ք/մ ավտոտնակի, 9.2ք/մ ծածկի նկատմամբ.

2 Ինքնակամ կառույց ճանաչել 2002թվ-ին կառուցված 60.3ք/մ բնակելի տունը և 41.8ք/մ ծածկը.

3..Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռուբեն Կարապետյանի Անահիտ Կարապետյանի, Հակոբ Կարապետյանի էդիտա Կարապետյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.

4 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ռ.Ֆ.Մարգարյան**

2014 թվականի փետրվարի 25
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» փետրվարի 2015 թվականի N 04 -Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի-N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Ռուբեն Բաբկենի Կարապետյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 038-006/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 27 փողոց 1 ին նրբանցք թիվ 3 տուն .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ.Ֆ.Մարգարյան

2015 թվականի փետրվարի 18
գ.Արմավիր